

վկայութեամբ 1347-ին ձէնովայի մէջ թափօրի մը ատեն «մետաքսը այնքան հասարակ էր որ... 1000-ի մօտ քաղաքացիներ մետաքս հագած մասնակցեցան»: Իսկ ուղեղիր Բէքո Թափուր (1435-1439) կը վկայէ, որ Պօլօնայի մէջ (Իտալիա) ջրաշարժ մետաքսի մանարաններ կային: Իտալիայէն մետաքսը անցաւ Ֆրանսա, իսկ 1600-ին Tuilleries-ի մէջ թթաստաններ տնկուեցան Իտալիայէն ձեռք բերուած շերամի հաւելիթներու բուծանման համար: Իսկ Անգլիոյ մէջ թէեւ մետաքսը ծանօթ էր էլիզապէթ թագուհիին ատենէն, եւ անկէ առաջ ալ, սակայն, միայն Անգլիոյ ձէյմս առաջին թագաւորէն, մղուած Ֆրանսայի Հէնրի Գ-ի օրինակով, 1608-ին Oatlands-ի մէջ թթաստաններ եւ շերամարուծարան հաստատուեցան:

Ամերիկաներուն մէջ 1552-ին Սպանիացի Գորդէզ, Մեքսիկոյի Ազդէքներուն մէջ շերամապահութեան փորձեր քրաւ, մինչ մետաքսեղէնները եւրոպայէն կը ներածուէին դեռ: Earl of Southampton եւ իր Company of Virginia-ն ձեռք զարկին շերամապահութեան: Անգլիոյ ձէյմս թագաւորը հրովարտակ մը գրեց այդ ընկերութեան եւ իր գանձապահ իշխանին, որպէսզի ծխախոտի անշահարէր գործը մէկզի թողլով մետաքսի գործով զբաղին առ ի բարգաւաճում երկրին, քանի որ երկիրը յարմար է իր կլիմայով թթաստաններու համար եւ կրնայ մեծաքանակ շերամ պահելով մետաքս արտադրել: Այսուհանդերձ ասկէ առաջ, 1584-1587-ին, Վիրձինիա այցելողներու վաւերաթուղթերէն(4) կը տեսնենք, թէ բուսական մետաքսը եւ շերամի մետաքսը արդէն գոյութիւն ունէր, թէեւ երկար ատեն շերամապահութիւնը Վիրձինիայի մէջ չահարեր չը նկատուեցաւ. նոյն ատեն ծխախոտի դէմ Անգլիոյ յարուցած ներածման եւն. արդէլքները մեծ նեղութեան մասնեցին գաղութը: Հետըհետէ Անգլիոյ եւ Վիրձինիայի միջեւ համաձայնութեան եղբեր ստեղծուեցան. օրինակ, 1619-ին Վիրձինիա ձեռք բերաւ Ափրիկեան դերիներ ստանալու օրէնքը, եւ, վերջապէս, գաղութին ծերակոյտը որոշեց, որ իւրաքան-

չիւր հարիւր էյֆըր հողամասին անուազն տասր թթենի տնկուի, հակառակ պարագային իրր պատիժ 20 փաունտ ծխախոտ տուգանք տալու որոշումով: 50 փաունտ ծխախոտ խոտացուեցաւ անոնց, որոնք մէկ փաունտ մետաքս կը պատրաստէին: Վիրձինիայի ծերակոյտը Գէորգ անուն ՀԱՅՈՒ մը հետ 4000 փաունտ ծխախոտ տալով պարմանաւորուեցաւ, որպէսզի ան շերամարուծութիւն զարգացնէ գաղութին մէջ: Այս մասին ուրիշ մանրամասնութիւններ իր կարգին:

* * *

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԵՏԱՔՍԻ
ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Մետաքս կամ մետաքսեղէն շատ կանուխէն արդէն գործածուած կը գտնենք Հայաստանի մէջ, Գ. դարուն իսկ: Հայաստանի մէջ մետաքսի վաճառականութեան, այսինքն՝ ներածման, թէեւ խիստ հաւանական է որ Հայաստանի թթաստաններու առատութիւնը եւ առաջնակարգութիւնը, նոյն ատեն Հայոց հիւսուածեղէններու ճարտարարուեստներուն մէջ ունեցած անգերազանց կարողութիւնը գուցէ շերամարուծութեան զարկ տուած ըլլայ նոյնիսկ մեր երկրին աշխարհազբաղկան սահմաններուն մէջ իսկ, իսկ Քրիստոնէութենէն շատ առաջ, նոյնիսկ Արիական գաղթականութեանց շրջանին:

Պատմական փաստ է որ Քրիստոսէ առաջ Չինաստան կ'երթեւեկէին Հայ վաճառականները, որոնք ուրիշ ապրանքներու հետ մետաքս ալ կը բերէին յետոյ զանոնք անկէ Հոովմ կամ այլուր արտածելու համար: Մասնաւորաբար, «Han-երու մեծագոյն միապետին Wu-Ti-ի տիրապետութեան ժամանակ (140-86 Քրիստոսէ առաջ), Հոները արեւելեան Թուրքեստանէն կամ բոլորովին հիւսիս քշուած եւ կամ հպատակեցուած էին, Թարիմ (գետի) հունը լեցուած էր Չինական գաղթականներով. եւ կարւանները արեւմուտք կ'երթային մետաքսով, լայքայով եւ ճէյտով (Չինական թանկագին քար կաթնազոյն կամ կանանչ: Յ. Ք.) բեռնաւորուած, փոխելու համար Հայաստանի եւ

(4) Hakulyt. Voyages. Vol. VI. էջ 168-159: